

նեաց պէս մեծամեծ բարեպաշտուհիք, շատ
 աւելի դիւրաւ պիտի բողբոջէին՝ Խոսրովու
 կին մը եւ միանգամայն նու առաքինւոյն
 Տրդատայ, որ մոռնալով իւր տան ու թա-
 գին պատիւը, հեթանոս Սաթինկան մը
 վէպն իրականացնէր իւր վրայ, եւ Ս.
 Վրթանեսէ յանդիմանուէր «վասն գաղտնի
 շնութեան կծծութեան բարոյից պոռնկու-
 թեան». ու չարագործաց ձեռքը զինէր
 իւր յանդիմանչին կենաց դէմ (Փաւս. 8):
 Կամ Փառանձեմ մը, որ ճաճանչաւէտ գե-
 դեցկութեանն հետ զուգէր խաւարային ու
 գի մը: «Անօրէն մարդ էր, կ'ըսէ պատ-
 միչը, եւ ամենեւին յԱստուծոյ ոչ երկըն-
 չէր». իւր որդին դիւաց նուիրեց, եւ իւր
 նախանձորդ Ողիմպին սպանեց, Ս. Խոր-
 հրդոյն մէջ ամբարշտօրէն թոյն խառնե-
 լով (նոյն, 155, '23): Ասոնք զարտուղու-
 թիւն չէին բնաւ ազնուուհեաց դասին մէջ.
 Մանդակունւոյն ամբաստանութիւնն ա-
 նոնց դէմ շատ ընդարձակ է. եւ նախ
 թատերամոլութեան մէջ: «Ազգն անհա-
 մեստիցն կանանց, կ'ըսէ, . . միշտ ի թա-
 տերսն փութան», — զորս կ'երեւի՝ Ար-
 շակունիք առած էին Յոյներէն, եւ զեռ կը
 տեւէին Թ-Ժ դարերուն (Նար. 530. ՅՏ.
 Կթդ. 185. Որբ. 147), — եւ «եւեալ ի
 վեր ի զիտակ տեղիս նստին, խորհին եւ